26. ԳԸՄԳԸՄ ՍԱՐԵՐԸ

Ընում ա, չընում մին թաքավեր։ Էտ թաքավերին խոխա չի ընում։

Քըշեր-ցիրեկ մտածմունքի մեչի, կլոխը քաշ ըրած, ունքերը ուրուր տված ար կրենում։

Մին դոնըմ էլ իտի ըիքյեփ ման ար կյամ ուրան էն տրախտի մընան ըախչըմը, բիրգան անգուճավն ա ընգում, վեր մինը ըիդի ուրան ա կյամ։ Ետ ա տրեռնըմ եշըմ-տրեսնըմ մին դարվիշ էն ա ընդեղ կաղնած։ Դարվիշը պարով, ասծու պարին ա ասըմ, հըրցընըմ.
— Թաքավերն ապրած կրենա, խե՞ յրս էտքան ըեքյեփ։

Թաքավերն ասըմ ա.— Ա՛յ ղարիբ, անճանանչ մարթ, էտ հի՞նչ գյիգացիր, թա յրես ըեքյեփ ըմ։

— Դե վեր իտի յա, յրես կասիմ, թա խե՞ յրս ըեքյեփ։ Տու քըշեր-ցիրեկ քընենքյ ըս անըմ, թա խե՞ խոխա չունիս, խե՞ շառանգյ չունիս։ Մըհենգյ անգուճ կա՛լ, ծրեր էս տրախտի նման ըախչըմը էնա մին խընձորի ծառ կա, էս ա օխտը տարի յա պըտուղ չի տամ։ Էտ ծրեր ըաղվանչին էլ ա գյուդում։ Էտ ծառը ըս տարի մինակ մին խընձոր ա տալու։ Էտ ծառին լա՛վ եշեցիք, վեր էտ խնձորը հրսնի։ Հրսնելանը ետը պուք տո, կրեսը տու կրեր, կրեսը տո, թաքուհին օտի։ Ըտրանա ետը ծրեզ խոխա կինի։

Միչև թաքավերը օշը կըլոխը հրվաքիլը, էտ դարվիշը կորչըմ ա։ Թաքավերը մընում ա մաթ մնացած։ Նա կանչըմ ա ուրան

բաղվանչուն ասըմ. — Մըեր բախչըմը ըստի-ըստի մին խընձորի կա՞, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ։

Բաղվանչին ասըմ ա. — Թաքավերն ապրած կըենա, իտի մին ծառ կա, բախճին կըլխին, մին շատ դաշանգյ ծառ ա, ամմա հի՞նչ կանիս, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ։

Թաքավերն ասըմ ա. — Դե վեր իտի յա, եք, քյինինք տըեսնանք։

Ըտրանք էրկուսը մին տըեղ քյնում ըն։

Օրը կյարունք ար, բախչին ծառերը ծաղկած, չորս ղոլը լավ-լավ ծաղիկնի, վրետը ընգած ըտեղերք, կանանչ-կյարմուր թեփուռներավ ղուշերը երք ասելիս։ Թաքավերը մթկին դոնն ընգած բաղվանչուն հետան քյընում ար։ Վերչը հասնըմ ըն էտ ծառին։

Բաղվանչին ասըմ ա. — Տեր թաքավեր, հեսե էն ծառը։

Թաքավերը աշկերը պըլըզած եշըմ ա, տըեսնում ծաղիկ, պեն չիկա։ Բաղվանչուն ասըմ ա.— Ե՛կ, տու վէլ եշի, տըես ծաղիկ կա՞ յրան։

Բաղվանչին մին լավ տընդրըղըմ ա, ետավ ուրխացած ասըմ. —Տեր թաքավեր, հենե՞ էն լոխճան պըեցուր ճըղնին յրան մին ծաղիկ կա։

Թաքավերը սըերտը թմփթըմփալավ մուտացավ, եշից, տըեսավ էտ ծաղիկը, աշխարքիս ուրխութունը ասիս լհա՜ ուրա՜ն տվին։

Մին խըրեգյ կենալանը ետը, ետ տըեռավ բաղվանչուն ասից. — Գյուդում ը՞ս հինչ կա՞, էս ծաղկի հետի տու քու կըլխավտ բաղասխանատու յըս, ըտրա էտ մին պըտուղին հետի, տանավ-տըեղավ բաղասխանատու յըք։ Էտ ծաղիկը էն հանգին կը պահի՞ս, վըեր էլ գյուդում չը՞մ, հունցու քյըզանա իլա՜ծ խոխան։

Բաղվանչին մընաց տըրրկուսած, թա խե՞ յա իտի ասըմ։ Նա ծրեռքը սըրտին տըրա՜ծ միչև տափը կըլոխ տըվավ ուրա՜ն տըրուչը։

Թաքավերը ետ տըեռավ, եկավ պալատը։ Խիլլա՜ վախտ կարըմ չար գյիդա՜, թա էտ հի՞նչ պըեն ա, ուրա՜ն էտ օրան լըսածան տըեսածան մնացալ ար մաթ մընացած, հավատը կյամ չար, թա ուրա՜ն էլ խոխա կինի, ամմա սըրտըմը մին ուրխութուն կար։

Անց ա կըենում օրեր, շա՜փաթնի։ Ամմեն օր թաքավերը քըշանըմ ար բախճան, էտ ծաղկին եշըմ, տըեսնըմ ծաղիկը խընձո՜ր ա փըռնալ, փըռնած խընձո՜րն էլ մըծանըմ ա, թաքավերը ըտրանավ ուրա՜ն սըրտըմը ամեն օր ուրխանում ար։ Վըերչը խընձո՜րը հըսնըմ ա։ Ծառան պուք ըն տամ, պըերում տամ թաքավերին։

Պալատըմը թաքավերը նան թաքուհին օտըմ ըն։ Ըտրանա ետը անց ա կըենում թաքավերին մըհար շատ էրգյան իննը ամիս, իննը

օր, ինը սրհաթ, ինը մունուտը։ Թաքուհին մին լավ տրղա խոխա յա պրերրմ։

Թաքավերը աշխարքիս չանք ուրխանրմ ա, քառասուն օր ղոնախլրղնի յա սարքրմ, քյասիրներին փոդ ա պեց թողրմ, էլ հինչ լրվոթուն ասիս անրմ ա։ Ըտրանա ետը թաքավերը որոշում ա ուրան տրղին հենց տրեղ պահի, վեր դարդրղազար չի տրեսնա, վեր աշկավ չի տան, վեր փիս պեներ չի տրեսնա, վեր շուտ չի պրռավի։

Անց ա կրենում շատ օրեր, տարի, ամրես, շափաթ, թաքավերին տրղան մինակ օթախին մեչին մրծանրմ ա։ Մրծանրմ ա, ամմա վեշ մին պեն չի գյուղում, վեչ թաքավերական կործերին անա, վեչ էլ ժողովուրթին անա։

Մին դոնրմ թաքավերին աշպազը սխալվրմ ա, թաքավերին տրղին ամանին մրեչը մին վրեսկուռ ա թողրմ։ Էտ տրղան ճաշը օտելանը ետը ըսկրսրմ ա էտ վրեսկուռը կոռծիլը։ Կոռծից, կոռծից, պրեն չի տուս եկավ։ Էտ տրղան ըշրղվից, քրշկոտվից վրեսկուռը եր կալավ, յրա ըրավ, ակուշկան տրվավ, ակուշկին հիլին կոտրից զրրընգ-զրրընգալավ եր տրեռա՜վ։

Թաքավերին տրղան քյինից ակուշկեն էտ կոտրած տրեղան եշից դիրի քյուշան։ Իտի պրեն տրեսած չար, լհա՜ իստի մնաց ցրմաքած։

Ժողովուրթ, քյինիլ-կյա՜լ, մարթիքյ, դուքյաննի, լիքյը տրրաքրմ... էլ հի՜նչ ասի՜մ, էլ վե՜րը ասի՜մ, վե՜րը թողի՜մ...

Նա էլ օղից վեչ պալատրմը կրենա, ճրղճրղոցը քցից ըտրեղերք, տոնը-ակուշկա կուտրատից, լոխ տրկրկլոխ ըրավ։ Էտ սաասին յրան ծրռոտենքյը եկին, հրվրքվեցին, տրեսին, ետնան խարարը տարին տրվին թաքավերին։

Թաքավերն ասից. — Պա՜հ, մրղափո՜ւն, տրղաս շուտ ա աշխարք մրննրմ, էլ օզրմ չի պալատրմը կրենա, ամմա էլ օրիշ ճար չիկա, քյեցիք պրերիք ընդրղան, ըալքյաս դինջանա։ Թաքավերը սաղ օրը քնենքյ ա անրմ, թա հի՜նչ անի, վեր ամալ կյա։

Ասրմ ա. — Լավ կինի, վեր մին փեշակ սրվրերի. իմ երգյիրրմրս լավ փրեշակավերնի շատ կա, թող լոխ տուս կյան մեյդան, ուրանց շինած, տուս պրերած պներավը, ուրանց ծրեռքին շընորքավը, տրղաս տրեսնա, վերը հավան կրենա, էն էլ սրվերի։

Գյրաքյի օրը լոխ փրեշակավերնին հրվաքվրմ ըն մեյդան, ուրանց ծրեռքավը եկած, ուրանց վրեսկե մաններավը շինած պրեներին նրհետ։

Էս թաքավերին տրղան լոխ մին-մին տրեսնրմ ա, լոխ տրնդը-

ղրմ, ետավ կյամ ա թաքավերին կոշտը, ասրմ. — Ա՛ հաՎր, յրես օզրմ ըմ վրերսկան տրեռնամ, հենե տրեսնրմ ը՞ս էն վրերսկանին, սարի մրնան ընդեղ կաղնած, օզրմ ըմ ընդրա հընգերը տրեռնամ։

Թաքավերը կանչրմ ա էտ շահիլ, բոյավ բուսաթավ, ղաշանգյ տրղին, պատրոնդաշիքը դիշը պատած, թրվանգյը լրեն թրեդյունքավը քրցած ար տրղին, հրրցրփորց անրմ, տրեսնա հո՞ւ վա, հո՞ւ չի, տրեսնում ա աշկրմը իշեղ կա, ծրեոքավը պրեն կրկյա՞, ուրան էլ ա տուր կյամ։ Տրեսնրմ ա, էն էլ ա մադար տրղա։ Ասրմ ա.— Բա՛-լա, ըսօրանը ետը տու կինիս իմ մադար տրղիս մրեծ ախպերը, ընդրա թեգյունքին սարը, ըսօրվանը ետը ընդրան մրղայիթ կրկենաս մինակ չրս թողիլ, ըշտրեղ քյինի, հետան կրքյինիս տու էլ ըս մադար, ինքյն էլ ա մադա՞ր։

Էտ շահիլ վրերսկանը աշկերը պրցրրցրնում ա, թաքավերին եշրմ, տրեսնրմ, վեր ուրան սրերտն էլ մին պրեն ընդավ, ասիս լհա թաքավերը ուրան հաՎրը ինի՞։

Ընա չոքրմ ա թաքավերին առաչին, ասրմ.— Տե՛ր թաքավեր, յրես քու առաչիտ չոքած ուրթում ըմ օտրմ, վեր յրես իմ դյանքաս շատ կը սիրիմ ընդրան, միշտ նրհետը կինիմ, նրեղ տրեղը ընգած վախտը, դրլվրմը կաղնած կինիմ։

Թաքավերը էրկուսին ճկատան պաչից, ուրան կոխկին նրստրցրրավ։

Ժողովուրթը տուսումը կաղնած ըսպասրմ ար, վեր տուս կյան, տրեսնան ըտրանց էրկուսին։

Վեր թաքավերին տրղին ծի նստած տեսնրմ ըն, ուրան մրեծ հընգյերին նրհետ, շատ ըն ուրխանրմ, էլ ծափ, էլ ծրծաղ, էլ ուռռա, գյուղում չին, թա հինչ անին։ ՄինաՎկ մինն ար տուխուր, մինին աշկը յոր չար օնրմ էտ ըրխոթունը։ Էտ էլ թաքավերին մրեծ վեզիրն ար։

Տա հաՎլա շուտանց սրրտրմը կար, վեր անժառանգյ թաքավերին կահին ուրան տրղան նրստի, ընդրան կրլոխը չար մրննրմ, վեր թաքավերը տղա օնի՞, լհա մին պրենի ար ման կյամ, վեր թաքավերին տրղին տոնը քանդի, կրլխին մին օյին տինի, կրլոխը օտի, փրչրցրնի։

Անց ա կրենրմ խիլլա՞ վախտ, թաքավերին տրղան վրերս անիլը սրվերրմ ա, ուրան մրեծ հընգյերին էլ շատ ա սիրրմ, մին մունուտ կարրմ չի, թա առանց ընդրան կրենա։

Էլ սար չրն թողրմ, էլ ծրմակ, էլ ծոր, ամման տրեղ շոռ ըն կյամ։

Թաքավերին տրղան տրեսնրմ ա, վեր ուրանք հրշտրեղ ասիս

ընում ըն, ըշտեղ ասիս քյընըմ ըն, ամմա բիդի աչ ղոլի պըեցո̈ւր սարերը քյընըմ չը՛ն։ Նա մըեծ ախպորան հարցմունք ըրավ, մըեծ ախպերն էլ ասից, վեր դիրի էն ղոլերը վըերս չիկա, նըհախ տըեղան հի՞նչ քյինիրն։

Նա օղըմ ար վեր թաքավերին տըղան ծըեռք քաշի էտ մըթկան, ամմա տա ըսդիրում ա, թա. — Չէ, վեր չէ, յըես օղըմ ըմ տըեսնամ էն սարին քըմակին հի՞նչ կա։ Մըեծ ախպերը լա̈վ ար գյուդում, վեր էն սարին քըմակին օխտը օշափ ըն կըենըմ ո̈ւրա̈նց, հո̈ւրիփա̈րի, դունյա գյոզալի քվորը նըհետ։ Մըեծ ախպերը օղըմ չար, վեր թաքավերին տըղան էտ օշափներին տըեսնա ընդրանց իրես-իրես ինի, վըերշը վեր թա̈քյաժա̈ռա̈նգյը էրկու վըեննը մին չմըշկըմ ա տընըմ, թա յըես ըմ, վըեր յըես ըմ, ըեմդա քյինիմ տըեսնամ, ճարը կըտըրված մըեծ ախպերը դաբուլ ա կըենըմ ընդրան սարին էն դոլը տանի։

Հա̈լա̈ թա̈զա̈ յին անց կացալ սարին էն ղոլը, վեր մին վըրըխկալի ըխպիրի քըշտի էն օխտը օշափին քըվորը, էն հո̈ւլլո̈ւ-մա̈լա̈գյին տըեսին ընդեղ կաղնած։

Վեր թա̈քյաժա̈ռա̈նգյը ըտրան տըեսավ, օշը տարավ, եր ընգավ։ Ախճիգյըն էլ հումց աշկա կորավ, ասիս լհա̈ մին ղուշ ար, թռավ, քյինից։

Վեր օշը կըլո̈խը եկավ, ըտրանք ըտըղան էլ ետ տըեռին բիդի պալատը։ Ըտըեղ թաքավերին տըղան ասից.— Էն հո՞ւ վար էն մարալ-շեյրան ախճիգյը, յըես ընդրան սիրեցի։

Մըեծ ախպերացուն ասից. — Էս սարըմը կըեննող օխտը օշափ կա, ընդրանց քյո̈ւրն ա։

Էլ մինչև պալատ հըսնիլը վեչ մին խոսկ չըսեցին։ Ըտրանա ետը թաքավերին տըղան վեչ ուտըմ ար, վեչ խըմըմ, վեչ ասըմ, վեչ խոսըմ, տըեռալ ար աշխարքաս ծըեռք եր կալած, ըեքյեփ, էլ վեշ մին պըեն ո̈ւրա̈ն տուր չար կյամ։

Պալատըմը ո̈ւրո̈ւր անավ ին ընգյալ, վեշ մինը գյուդում չար, թա խե՞ իտի յա, ըտրա դա̈րդը ղըեյիդը հի՞նչ ա, հի՞նչ չի։ Մինա̈կ էն վըերսկան տըղան ար գյո̈ւդո̈ւմ, էն ախպերացուն։ Էն էլ հիշքան քննեքյ ար անըմ, գյուդում չար, թա հինչ անի։ Լհա̈ էն ար գյո̈ւգո̈ւմ, վեր տա շատ տըժեր պըեն ա, վեր էտ օխտը օշափը ո̈ւրա̈նց քյո̈ւրը տալու յըն մին հենց տըղի, վեր ո̈ւրա̈նց օխտըքանան էլ օժավ ինի։

Շատ ա անց կըենըմ, խրեգյ ա անց կըենըմ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյո̈ւդում, մին օր էլ թաքավերին տըղան նան ո̈ւրա̈ն մըեծ ախպերացուն ծիյանքը նիհ իլա̈ծ քյինըմ ըն բիդի էտ սարը։ Վըեր պըցրա̈նըմ ըն ըտեղ, ախպերացուն ըտրան մին փոսըմ կյե-

ղում ա, ծիյանքը ըտրեղ կապում, ինքը թուշ, զոննի, քյընում բիդի էտ օշափներին ամարաթը։

Տրեսնում ա տուսումը էնա մին մրեծ կըրակ ըրած, յրան էլ մին օխտը ունգյնանի եքյա ղազան տիրած։ էտ ղազանին մրեչին էլ օխտը կով ա իփում պըլթպըլթալի, հալա թըշշ-թըշշալի էլ ղըրղնըերան եր տրեռնում։

էտ մրեծ ախպերացուն մուտանում ա, պարյոր տամ էտ կըրակին պուլլորքավը նըստոտած օշափներին։ Ըտահանք իսկի տրեղներան տուրուր չըն կյամ, իսկի շողար չըն տամ։ Վեր մին էլ ա պարյոր տամ, ըսկըսում ըտրանց խոսացնիլը, ըտրանց անա մրեծը ասում ա. — էտ ղազանը պըցըրցրու, տական կրակ հանի, տար։

էտ ախպերացուն հըսկանում ա, թա ըտրանավ հի՞նչ ըն օզում ասին։ Տա ղազանին էրկու ունգյունան փրռնում ա, յոր օնում, տինում տափին, տական կրակ յոր օնում, էլհա ղազանը տնում կըրակին, առանց խուսելի ետ տրեռնում։

էտ օխտը օշափնին ուրուր եշում ըն մաթ մընացած։ Մրեծ օշափը ասում ա. — էլ հի՞նչ ըք նըստոտալ, եր կացիք քյեցիք էն տըղին կանչեցիք կյա, տա մրեր քըվերը լայըղ տըղա յա։

Պուճուր ախպերը վազ ա տամ ծրեն տամ, էտ ախպերացուն ետ ա տրեռնում, կյամ օշափներին կոշտը։ Մրեծ օշափը ասում ա. — Դե, վեր տու իտի ղոչաղ տըղա յըս, մրեր քուրը քյըեզ հալալ։

էտ ախպերացուն ասում ա.— Յրես եկալ ըմ ծրեր քյուրը վրեչ թա ինձ հրետի տանիմ, եկալ ըմ տանիմ իմ պուճուր ախպորս հետի։

Ասում ըն. — Հի՞նչ կինի՞, տար։

Ըտրեղ պայման ըն կապում, թա վեր օր կյան ախճիգյը տանին։ էտ ախպերացուն մըտանի յա տամ, մըտանի յոր օնում։ Ըտրանա ետը ախպերացուն կյամա թաքավերին տըղին կոշտը, տրեսնում ըտրա քեթը-պըռոշը ուրուն ա։ Մընում ա գյունաքար, ետավ կըլոխ ա ընգնում, վեր ինքը ղազանը պըցըրցրալ ա, տափին տիրալ երգյրաշարժ ա իլալ, սարը գըմբ-գըմբալի տուրուր ա եկալ, թաքավերին տըղին իրեսը նի յա եկալ փոսին պատին, քրեթը ճառթալ, ըռնըթաթախ ըրա՞լ։

Ըտրեղ էտ մրեծ ախպերը նաղլ ա անում, թա հի՞նչ իլավ, հի՞նչ ըսեցին, եր կալած մըտանին էլ տամ ա ըտրան։ Էրկուքան էլ օրախ-օրախ կյամ ըն պալատը թաքավերին լոխ նաղլ անում։

Պալատըմը լոխ ուրխանում ըն, ըսկսում ըն բադրաստոթուն քաշիլը հըրսընքին հրետի։

Թաքավերը ուրխընալան նըհետ, էտ ղոչչաղ տըղին պաղվեն,

իրեք օր ուրան թախտը տամ ա ըտրան, համ էլ խաչախպեր ա ունթունում ըտրան։

Մրեծ թափուրավ քյինըմ ըն հարսին պրերին։ էլ թրվանգյ արրրքցընիլ, էլ պար, էլ երք, էլ քյեփ, հի՞նչ քյե՞փ, աշխարքավրս մի՞ն։

Հարսին յոր ըն օնըմ, թա կյան, կես ճրնապարին մին ղուշ թրուչըմ ա, կյամ էտ ախպերացու-խաչախպորը օսին կաղնըմ, անդուճումը ծրլվրլըմ, ասըմ. — Ա՛յ ախպեր, մին խրեգյ ետ ընգի, պրեն ըմ ասըմ։

Ախպերացուն մրհա՞լ չի տրնում, էտ ղուշը մին էլ ա, ասըմ էրկու էլ ա ասըմ, ախրը-վրերչը էտ ախպերացուն ետ ա մրնում։

Ղուշը ընդրան ասըմ ա. — Ա՛յ ղոչչաղ ախպեր, լա՞վ ա՞յիդա՞. վեզիրը, ընդրա տրղան, ընդրա հարսը լա՞վ, լա՞վ բադարկեք ըն պերելու թա՞զա՞ հարսին նան թա՞զա՞ փրեսին հետի։ Թողիս վեչ փրեսան նստի ընդրանց պրերած վրեսկե թամքավը ծիյին յրրան, ծին — կրտաղած ծի յա, թամքըն էլ աղու ճար քրսած ա, վեր յրրան նրստի, մրեռնելու յա։ Թողիս վեչ, վրեր թա՞զա՞ հարսը ըտրանց պրերած տուպլիքյը կյենա, մրեռնելու յա։ Մին պրեն էլ բիդի ասիմ,— էտ էլ էն ա, վեր տու էլ լոխ թաքուն բիդի պահիս, քու դյանքըմրտ վեշ մինին ասիլ չիբիդիս, լհա՞ վեր ասեցիր, քար ըս տրռնալու։

Էտ ղուշը լոխ ասըմ ա, ինքն էլ թրուչըմ, քյինըմ։ Էտ ախպերացուն մրնըմ ա մաթ մրնացած, թա էս հի՞նչ պրեն ա, էս հի՞նչ զատ ա, վեր եկալ ա իմ կրլոխրս։ Համ ասըմ ա, համ էլ շո՞ւտ անըմ, քյինըմ հրրսանիքին հրսնըմ, դյրվաքյիս թա վեշ մին պրեն չիլա՞լ։

Վեր պատառ մուտանըմ ըն, ճրնապարին, ազկ-պարեկամ, մրեծամրեծնի, նա՞զիր-վա՞զիր, լոխ տո՞ւս ըն կյամ թա՞զա՞ փրեսին նան թա՞զա՞ հարսին առաչը։ Էտ ախպերացուն լհա՞ աշկը յրան ա պահրմ, տրեսնա համին էտ վեզիրը հի՞նչ ա անելու։ Վեր լափ մուտանըմ ըն պալատան, տրեսնըմ ա համին էտ վեզիրին տրղան եկավ, մին վրեսկե թամք յրան տիրած Ղարաբաղի մին շատ լավ ծի վրեսկե գյա՞բա մեշկին փրռնած, պրերավ, թա տա թաքավերին տրղին։ Ըտրա կրնեգյրն էլ մին վրեսկե մրժմա՞հու մրեչի գազավ ծասկած, մին ճոխտ ղա՞շանգյ տուպլի պրերավ, թա տա թա՞զա՞ հարսին։ Էտ ախպերացուն, վեր մինչև էտ տրրրկյո՞ւսրմ ար էն ղուշին ասածին յրան, մրհեկ լափ հրվատաց, վեր ղուշը դո՞ւզ ա ասալ։

Ետ ա տրեռնըմ վեզիրին տրղին հրամմայրմ, ասըմ.— Առաչ ծին տու նրստի, ետավ փրեսան, էս տուպլիքյն էլ առաչ թող կրնեգյրտ կյենա, ետավ հարսը։

Ըտրեղ պատառ ղըլմըղալ ա պըցրանըմ, թա իտի պըեն չինի՞լ, օրենքյ կա, ադաթ կա, բադարկան առաչ պըերողը չի պընըցընիլ, էտ վեզիրին տըղան նան ուրան կընեգյը իսկի օզըմ էլ չըն, թա կընեգյը տուպլիքյը կյենա, ինքն էլ ծին նըստի, ամմա ախպերացուն ըսդիրում ա։ Ըտրանք ճարը կըտրած իտի էլ անըմ ըն։ Լհա վեր վեզիրին տըղան ծին նըստըմ ա, ծըեռաց մըեռնըմ ա, կընեգյըն էլ լհա վեր տուպլին կյենըմ ա, էլհա էն սրհաթը մըեռնըմ ա։

Հըրսընքավերնին մընըմ ըն մաթ մընացած, սառած-սըքառած, քար տըեռած։ Նոր ըն կըլխու ընգնըմ, վեր խե ար էտ ախպերացուն իտի տական-կըլխան, նըհախ տըեղան խոսըմ։ Ըսկըսըմ ըն ըտրան հարցըփորց անիլը, ամմա տա վեշ մին պըեն չի ասըմ, լհա ասըմ ա, թա. — Հըրսանիքը շարունակեցիք, էլ վեշ մին պըեն։

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Հի՞նչ հըրսանիք, թա հի՞նչ... Ասիս լհա աշխարքիս լավ-լավ պըեները, պըերալ ըն էտ ըստոլնըերին ածալ, էլ օտի՞լ, էլ խմի՞լ, էլ վըեսկե, պըռըլյանդ շաղ տա՞լ... Ամմեն հի՞նչ...

Ախպերացուն շատ օրախ ար, վեր չարը խափանալ ա, ամմա թաքավերին տըղան տուխուր ար, ուրան մըեծ ախպերացուին յրան նըղացած, թա խե՞ էտ պըեն թաքուն ա պահըմ, ուրան ասըմ չի՞։ Վերչը էլ կարից վեչ ուրան պահի, ասից. — Բա մունք ախպերք չը՞նք տըեռա՞լ, էտ խե՞ չըս ինձ ասըմ, թա հինչ ա իլա՞լ։ Էտ հի՞նչ մըեծ պըեն ա, վեր ինձ ասըմ չըս։

Ախպերացուն տըեսնըմ ա, վեր տա շատ ա ուրան անա նըղացալ, ասից. — Տու գյուղոնում ըս, վեր յըես քյըեզ իմ գյանքաս իվիլ ըմ սիրըմ, քյըզանա վեշ մին թաքուն պըեն չօնիմ, կասիմ, էտ լոխ կասիմ, ամմա տու կը փըշմանիս, քու սըերտըտ կըցավի, կը տանշվիս, քըշեր-ցիրեկ աշկըտ հոփ չի կյա՞լ։

Էտ ախպերացուն, լոխ նաղլ ա անըմ, հինչ վեր իլա՞լ ա։ Լհա վեր վըերչին պառը ասըմ ա, ուրանք էլ մուտացալ ին իտի խոսելավ թաքավերին տըղին օթախին, իտի լհա վեր ասըմ ա, պըրծընըմ, էտ օթախին ակուշկին տակին էտ ախպերացուն քար ա տըեռնըմ*։

---

* Ջանըս ծըեղ մատաղ, ա հաքյաթ լըսողնի, էս ա կըես քըշեր ա տըեռալ, ըսօր հիշքան էս հաքյաթը նաղլ ըմ ըրալ, բոլ ա։

Քյընացիքյ քոն իլիք, կըեսն էլ էքյուծ ուրուգյունը նաղլը կանիմ։ Տըեսիք է՞, երգյինքին ասթխերի՞ն, շամփուր-քըշեռքը տուս ա եկալ։ Հենե՞, էն խուրդա, թուփ եկած ասթխերը տըեսնըմ ը՞ք, էն «Պաղումքըն» ա՞, էն էլ ա տուս եկա՞լ, էն ղոլան էլ

Թաքավէրին տըղան վէր տըեսնըմ ա ախպէրացուն քար ա տըեռալ, պադրաստութուն ա քաշըմ, քյինի աշխարքիս էն ճընդան էլ ա, մին ճար պըէրի ախպորը լիվըցընի՜, սըղըցընի՜։ Իտի էլ էըլո̈խ ա յոր օնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրէգյ, ինքն էլ չի գյո̈ւղո̈ւմ, մին դո̈ւղ, լա̈վ տըէղ պըտահըմ ա մին մըեծ էքքա̈ ամարաթի։ Տըռնավը նի յա մըննըմ, տըեսնըմ մին մարթ ըտըէղ կաղնած... էտ մարթը օղըմ ա, թա տըռնավը տո̈ւս կյա, ըտրա կըլխին էրկու մըեծ պող ա փըսնըմ, մինը պատալոկին մին քյունշըն ա նի մըննըմ, էն մինն էլ պատալոկին էն մին քյո̈ւնջը։ Ամմա վէր էլհա էտ ա տըեռնըմ օթախին մըէշտըեղը կաղնըմ, պոզէրը ինքը-ինքը կորչըմ ա։

Իտի էտ մարթը սաղ օրը չըրըշարվըմ ա, թա տո̈ւս կյա, պոզէրը փըսնըմ ա՞, էլ կարըմ չի՞, մին էլ էտ ա տըեռնըմ։

Թաքավէրին տըղան ինքն ո̈ւրա̈ն ասըմ ա. — Բա̈լքյա̈ս էս մարթը, վէր իստի ղաղարի յա էկալ, մին պըէն ա գյո̈ւղո̈ւմ, մին փա̈նգըփըէլ ա գյո̈ւղո̈ւմ, մին ճար, մին դա̈րմա̈ն ա գյո̈ւղո̈ւմ ախպորըս լիվըցընի, մին ասիմ, տըեսնամ՝ հինչ կասի։

— Քու քար տըեռած ախպէրտ ինձանա րախտավըէր ա, վէր քյըէզ նման ջանը յուղուըըմը տիրա̈ծ ախպէր օնի. ինձ իտի մին ջընըյանա մարթ չօնիմ, վէր մին ճար, մին դա̈րմա̈ն անի ինձ։ Քյըղանա էլ յըէս շատ ըմ խընթըըմ, վէր ախպորըտ հէտի ճար անող քյիթնիս, ինձ մըհար էլ հըրցըըու, բա̈լքյա̈ս ինձ հէտի էլ մին պըէն անի։ Դէ իմ ծըեռքավըս պըէն չի կյամ, պըէն չըմ գյուղում քու ախպոր հէտի՞։ Թաքավէրին տըղան խոսկ ա տամ էտ պողավէր մարթին, վէր թա իտի պժիշկ ճար, կըհըրցընի։ Ասըմ ա էլհա ճընապար ընգնըմ, քյինըմ։

էն կյիրմիրին տըվող ասթըխը, էն կըռվի ասթըխն էլ ա տո̈ւս էկա՞լ, ա՞խ կըռև չինի, մըէր շա̈հիլ բալէքը սաղ ինին, լոխ լա̈վ ինին, ընդրանց մէջին էլ իմ բալէքս... էն վէր աչ ղոլինն ա՞... Դէ պարի քըշէր լոխճիտ...

— Այան ծըէր կըլխավը շոռ տա, դէ էկէքյ րալկոնըմը ըստոլին կոխկին նըստէցիքյ, էս ա էս սո̈ւրմա̈-կոճակավ խըլէղըս հանիմ, տաք ա, մընա տակին կյա̈րմո̈ւր հալավըս, կյամ հա̈քյա̈թին կըէսըն էլ ասիմ, էն սարին քըմական էլ մին տեսեք հի՞նչ լո̈ւսընդյա յա տո̈ւս կյամ, հենց ա լհա̈ էն Թաքավէրին հարսը ինի՞, պո̈ւլլո̈րիրէս, պըծըպածին ընէլիս՞, Նախշու՞ն... Դէ մըհէկ լըսէցիք։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, գյուղում չի, վըերչը հըսնըմ ա մին ճընապարհի։ Էտ ճընապարին գալուն մին մըեծ քարի տեմ տըված մարթի։ Էտ մարթը վեր օգըմ ա, թա եր կըենա, ասըմ ա, թա. «Փառք ասծու, էս ա եր կացի», էտ քարը մըեշկան ա կըենըմ, ճաքըմ, ճըքճըքոտըմ, մըեշան էլ վըեսկե յա եր տըեռնըմ, ամմա էտ մարթը կարըմ չի տըեղան տուրուր կյա։ Ամմա վեր դինշ տըեղը նըստըմ ա, քարը մըեշկան պուք ա կյամ, ինքն էլ ղինշանըմ ա։ Իտի սաղ օրը տարի էտ մարթը տանջվըմ ա։

Թաքավերին տըղան ըտրան էլ ա լոխ նաղլ անըմ, հըրցընըմ ուրան ախպորը հետի մին ճար, մին դարման, ամմա էտ մարթը գյուղում չի՞, հալա ինքն ա դաշանք-պղատանք անըմ, վեր ուրան հետի էլ մին տըեղ, մին դարման գյիդա, հիրը մին գյուղող ճարի։

Թաքավերին տըղան էլհա ճընապար ա ընգնըմ, քյինըմ։ Քյինում ա, քյինում, հասնըմ ա մին շենի։ Տըեսնըմ ա էտ շենը ուրուրոցավ ընգած, ղըլմըղալ, խոսկը զուրուց։ Տա մուտանըմ ա մին հլիվեր, մազերը ծուն տըեռած մարթի անա հըրցընըմ, թա.— Ապեր, էս հի՞նչ ղըլմըղալ ա։

Էտ աղսախկալ մարթը ասըմ ա. — Ա՛ բալա, քառասունինչի դոնըմըն ա, վեր մեր շենըմը ժամ ընք շինըմ, մըեծ ծախսեր անըմ, չըրչարվըմ, տանջվըմ, ամմա լհա՞ վեր տերտերը նի յա մընընըմ ժամը, թա պադարագյ անի, ժամը տուրուր ա կյամ, մին հենց քամի յա պըցրանըմ, վեր էլ խոսկ չըմ քըթենըմ ասիմ, լոխ պարան ա տամ, Սոդոմ-Գոմոր շինըմ, իլած-չիլածըն էլ քըշըմ, տանըմ։ Ամմա ժողովուրթը էլլա յա շինըմ։ Ըսօր էլ քառասունինչի դոնըմը պարան եկավ, էլհա ակուռի տըեռա՞վ։

Էտ հլիվերը վեր գյիդաց էտ թաքավերին տըղին դարդերը, ասից. — Ա՛ բալա, ասծու օրթնանքը քյըեզ յրա ինի, վեր քյինիս քու ախպոր հետի մին ճար անող քյիթնիս, մըեր ժամին հետի էլ կասիս, բալքյա մին թահր անի, էլ մըեր ժամը քանդվի վե՞չ։

Թաքավերին տըղան ըտրան էլ ա խոսկ տամ, էլհա ուրան ճընապարը ընգնըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, մին պըեց տըեղ, մին դուզ հանդի մըեչի մին արշինաբոյ մարթ ա տըեսնըմ, մըրոքը՝ էրգյան, ինքը՝ կարճ։ Ուրուր պարյօր-ասծու պարին ըսելանը ետը թաքավերին տըղան էտ մարթին ուրան դարդը ասըմ ա։

Էտ կարճ բոյավ մարթը ասըմ ա. — Ա՛ թաքավերի տըղա, քու բախտըտ տու ճարալ ըս։ Էտ ճընապարավը վեր մին խըրեգյ էլ քյինիս, մին տըզտըզոց ըս լըսելու։ Էտ տըզտըզոցին հըետան

կըքյինիս, միչև վեր կըհըսնիս համին էն մարթին, վըերին տու ման ըս կյամ։

Թաքավերին տըղան ուրխացած, աշխարքըս ուրանը տըեռած, ճընապար ա ընգնըմ, քյինըմ։

Մին պատառ ետը մին տըզզոց ա լըսըմ, էտ տըզզոցին հետան քյընըմ։ Մին խիլլա վեր քյընըմ ա, էտ տըզզոցը նի յա մընընըմ մին խոր ծոր։ էտ ծորին վըերչըմը, էտ տըղին առաչին մին տոռն ա պըեցվըմ։ էտ տըռնավը նի յա մընընըմ, տըեսնըմ մին փալաքյան։ էտ փալաքյանավը քառասուն վըեննը քըշանըմ ա քաշ, նի մընընըմ օխտը օթախ, ուրուր մեչավ տըռներ։ Քյինըմ ա անց կըենըմ էտ օթախներին մըեչավը, մարթ չի տըեսնըմ։

Մինակ օթինչի օթախըմը տըեսնըմ ա մին պառավ, սիպտակ մըրքավեր մարթ, մին ըստոլի քըշտի նըստած, կյիր ա կյիրըմ։

Թաքավերին տըղան յավաշ-յավաշ եկավ էտ մարթին կոշտը, շոքից, ծըեռքը պաչից, ուրան դարդը նաղլ ըրավ, էտ հըլիվըեր մարթան մին ճար, մին դարման ղաչանք ըրավ, ուրան ախպորը հետի։ էտ պառավ մարթը ետ տըեռավ էտ տըղին եշից, մըեխկը եկավ, մըթկըմը տիրավ ըտրան քյոմագյ ինի։

Մաննան հանից ուրան մըտանին, տըվավ էտ տըղին, ասից.
— Ա՛ վըերթի, էս մըտանին եր կալ, ըշտըեղ հինչ պըենդ պըեն ինի, վեր քըսիս, ճուր ա տըեռնալու, հիշքան էլ կակող պըեն ինի, ճիրի նըման պըեն ինի՞, վեր քըսիս պընդելու յա։ Լհա հինչի վեր քըսիս, հի՞նչու վէլ օղիս յա մըթկըմտ տինիս, էս մըտանին թըռչի, քըսի օգածըտ կադարվելու յա։

Թաքավերին տըղան ասըմ ա.— Շատ շունրակալ ըմ, պապի՛, մինակ մին խընթիրք էլ օնիմ, հո՞ւնց քյոմագյ ինիմ էն պողավեր մարթին։

— Էլհա էտ մըտանին թըռչի ճիրըմը, պողերը քըսի, լավանալու յա, պոզերը հալվելու յա։

Էն ճընապարին նըստած մարթըն էլ թող տըեղան եր կրնալիս ասի վեչ «Փառք քյըեզ աստվածդ», ասծու անըմը տա վեչ, էն վախտը քարը մըեշկան պուք ա կյալու, տըեղան եր կրենա, ուրան ճընապան քյինի։

Էն ժամըն էլ պարան չի կյալ էն վախտը, վեր պատերը շինելիս, շենին տերտերը պատըմը տինին, հեմնին։

Թաքավերին տըղան էտ պառավ մարթին կըլոխ ա տամ, շունրակալ ինըմ, մըտանին մաննը քըցըմ, քյինըմ, ճընապար ընգնըմ բիդի տոն։

Կյամ ա, կյամ, հրսնըմ էն շենը, ըշտրեղ ժամը շինըմ ին, էլհա քանդվըմ ար։ Ըտրեղ ըտրանց լոխ ասըմ ա, հինչ վեր էն պառավ մարթը ասալ ար։

Ասելանը ետը էլհա շարունակըմ ա ուրան ճընապարը, կյամ համին էն քարը մրեշկան կացած մարթին, ըտրան էլ լոխ ասըմ, վեր էլ ասծուն փառք չի տա։ Քարը մրեշկան պուք ա կյամ, էտ մարթըն էլ ըտրեղ ա ազադվըմ, վրեսկին յոր օնըմ, կրեսը թա տա թաքավերին տրղի՞ն, ամմա նա յոր չօնըմ, ասըմ ա.

— Ցրես իմ ախպոր հետի յըմ քըրքար ընգալ, վրեշ թա վրեսկուն հետի։—Ասըմ ա պըրծընըմ, էլհա ուրան ճընապան ընգնըմ։

Հրեռըվան հրեռու, մին սարի կըլխի տրեսնըմ ա, իրեք հընգյեր կաղնած, ուրուր նըհետ հոշաթ ըն տամ։

Թաքավերին տրղան քյընըմ ա ընդրանց կոշտը, ասըմ. — Ա՛ ջա՛հիլ տրղերք, էտ խե՞ յըք ուրուր նըհետ հոշաթ տամ։

Ընդրանք ասըմ ըն. — Հրեսե ըստրեղ էրկու ճընապար կա, մինը տանըմ ա բիդի մրեր հայրենիքը, մինը բիդի մահ։ Մրհեգյ իստի ուրուր նըհետ հոշաթ ընք տամ, խրելք-խրելքի յընք տամ, տրեսնանք վեր ճընապարավ քյընինք, վեր լավ ինի...

— Բա ծրեղ հի՞նչ կործ օնիք մահվան ճընապարին նըհետ։

— Էտ ճընապարը տանըմ ա Հելահել թաքավերին պալատը։ Էտ թաքավերն էլ, մին ինդի կյեղեցիկ ախճիգյ օնի, վեր սաղ աշխարքըմրս ճարիլ չրս։ Էտ թաքավերը օղըմ ա ուրան ախճիգյը մին հենց մարթի տա, վրեր կարի մին մեծ կաթնավ լիքը ղազան պրցըրցընի ուրանց տրռանը փրսած չինարի ծառին պրտոկը, ընդրղան էլ քըշանա քաշ էն թահրավը, վեր էտ ղազանան մին կաթ կաթնը չի եր տրեռնա։ Հաարուրավեր ջահիլ տրղերք էտ ըխճրկանը դարդան կըլոխ ըն տիրալ։ Ընտրանց կըլխընեռան Հելահել թաքավերը պալատնի յա շինալ, մրհեգյ էլ մունք ընք օղըմ քյընինք, տրեսնանք մրեր բախտը պրերըմ ա, թա չէ, տրեսնանք սաղ կը մընանք, թա մրեր կըլխընին է՞լ ընդեղ կըմընան։

Թաքավերին տրղան էս վեր լսից, ճընապարը թրեք տրվավ բիդի Հելահել թաքավերին պալատը։ Էն տրղորցըն էլ ասից.— Տուք հինչ օղըմ ըք, արիք, յրես քյինըմ ըմ իմ բախտս փորցիմ։

Վեր տրեղ հրսավ, քյինից թաքավերին կոշտը։ Հելահել թաքավերը ուրան թախտին պաղմած, աշկերը ատնավ լըցած, հըմբարդ նըստած ար։ Վեր լըսից թաքավերին տրղան եկալ ա ուրան ախճիգյը օղի, ասից.— Բա տու գյուղում չը՞ս էն պայմանը, հու վեր իմ ախճիգյըս օղի, բիդի կաղարի։

Թաքավերին տըղան ասում ա. — Գյուղում ըմ, լըսալ ըմ։

Պըերին էտ կյեղեցիկ ըխճըկանը նշանց տըվին։ Թաքավերին տըղան ինքը ո̈ւրա̈ն մըթկըմը ասից։

— Իստի կյեղեցիկ ըխճըկանը հըետի մարթ կըլո̄խն էլ բադի կըտա, շանն էլ։ Ամմա վեր չինա̈րի ծառին պըցըո̄թումը տըեսավ վե՞չ, աշկը վախի՞ց, ո̈ւրա̈ն մըթկըմը ասից. «Յանի մարթ ըխճըկա դարդա̈ ո̈ւրան մատաղ կանի՞։ Ամմա դե տըղամարթը ո̈ւրա̈ն թըքածը լուղիլ չի՞, տըղամարթին խոսկը՝ խոսկ ա, տափին չի քըցիլ, ըտրա հետի էլ սուս ըրավ, կաղնից։

Պըերին կաթնավ ծըլպըծըլպան լիգյը ղազանը տիրին առաչին։ Տա եր կալավ դինշըմը, առանց թայդի ընդնելի նիհ ըլա̈վ ծառը։ Ծառը էնքան պըեցուր ար, վեր ըտըղան ո̈ւրա̈ն եռդյիրը ըրվաց։ Թաքավերին տըղին սըերտը մըղկըտաց, աշկերան արտասունք թափվից։

Ծառին տակին թուփ եկած ժողովուրթը, ծառեքը տըեսին վեր երկու կաթ կաթից, ծառին տակին փըռած զա̈ռխառա գյա̈քին յըրան։ Թաքավերը փառաշ կանչից, վեր տըղան ծառան եր կյա, կըլոխը կըտրին։ Թաքավերին տըղան յավաշ-յավաշ ծառան եր եկավ, կաթնավ լիքը ղազանը տըրավ առաչին, մընաց մա̈թա̈լ, թա էտ հի՞նչ պըեն ա, վեր Հելահել թաքավերը փառաշ ա կանչալ։

Թաքավերը նշանց տըվավ էտ էրկու կաթը։ Տա շատ մըտածից, թա տա հինչ պըեն ա, բա ինքը կաթնը քար ա շինալ, էտ հի՞նչ ա։ Բիրդա̈ն մըետն ընղավ, վեր լա̈ց ա ըլա̈լ, վեր էտ ո̈ւրա̈ն արտասունքնին ա։

— Թաքավերը ապրած կըենա, էտ կաթնը չի, էտ իմ արտասունքնիս ա։ Թող մին պըժիշկ կյա, քըննի։

Պըժիշկը եկավ քըննից, տըեսավ՝ աղի յա, կաթնը չի, արտասունք ա։ Ըտըեղ Թաքավերին տըղան ո̈ւրա̈ն կըլխավը անցկացածը լոխ նաղլ ըրավ։

Ըտրանա եար Հելահել թաքավերը մըեծ հըրսանիք սարքից, զուռնա-ղավալավ, տա̈փ-քյա̈մա̈նչավ, մըեծ պըեժինքավ ախճիգյը ճընապար տիրա̈վ։ Թաքավերին տըղան վախտին ասալ ար, վեր ախճիգյը վեչ թա̈ ո̈ւրա̈ն հետի յա տանըմ, տանըմ ա ո̈ւրա̈ն մըեծ ախպորը հետի։

Հըրսանիքը վեր եկավ հասավ ո̈ւրա̈նց պալատը, Թաքավերին տըղան լոխ ժողովուրթին կըզնըցըրավ, վազ տըվավ ո̈ւրա̈նց բախճան, մին դոլչա ճո̄ւր եր կալավ մա̈րմա̈ր ավազանան, մըտանին մըեչը քըցից, պըերավ ածից ո̈ւրա̈ն մըեծ ախպերացուին կըլխին։

Տա աշկերը պրեց ըրավ, ասիս լհա՜ վրեշ մին պեն չի պրտահալ, ըսկսից նաղլին կրեսը ասիլը։

Պալատը դրրընգաց ուրխոթունան։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք արին էտ մրեծ ախպերացուին հետի։

Թաքավերը ուրա՜ն թա՜գյը տիրավ էտ մրեծ տըղին կըլխին, տա թաքավեր տրեռավ։

Ուրա՜նք էլ համեշա իտի լա՜վ, սըերավ ապրեցին մինչև ուրա՜նց գյանքին վրերչը։

Ընդրանք հասին ուրա՜նց մուրազին, տուք էլ հասնիք ծրեր մուրազին։

Էն ասթխերավ լիգյը կյա՜պուտ երգյինքան իրեք մրեծ-մրեծ մին թոշը կյա՜րմուր մին թոշը կանանչ խընձո՜ր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լրսողին, մինն էլ՝ էս հա՜քյա՜թը տիպրել տրվողին...